ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217'-28.03.2022-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս**	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «փաստաթղթային ստուգման,» բառերից հետո լրացնել «ակնադիտական զննման կամ ակնադիտական հետազոտման (բեռների նույնականացման)» բառերը, իսկ «բեռների նույնականացման» բառերը հանել՝ հիմք ընդունելով պետական եկամուտների կոմիտեի կողմից նախկինում սահմանված ձևակերպումը՝ պետական սահմանի անցման կետում համապատասխան վերահսկողական գործառույթների պատշաճ իրականացումը ապահովելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»**	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաեւ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 2-րդ կետով «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի (այսուհետ նաեւ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 3.1-ին	Ընդունվել է: Նախագծով «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 2-	Ընդունվել է:

		օրենքի նախագծի 1-ին հոդված	կետի «սահմանային պետական վերահսկողությունը պետական սահմանի անցման կետերում՝» բառերը եւ կետադրական նշանն առաջարկում ենք գրել թավ տառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձեւը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձեւին (տեսքին):»:	րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 3.1-ին կետի «սահմանային պետական վերահսկողությունը պետական սահմանի անցման կետերում՝» բառերը եւ կետադրական նշանը գրվել են թավ տառերով:	
3.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նշենք նաև Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 3.1-ին կետում կիրառվում է «սահմանային պետական վերահսկողությունը պետական սահմանի անցման կետերում» եզրույթը, իսկ Նախագծի վերը մեջբերված հատվածում՝ «սահմանային վերահսկողություն» եզրույթը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը հիմք ընդունելով՝ առաջարկում ենք Նախագծում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառել միեւնույն եզրույթը:	Ընդունվել է մասամբ: Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 3.1-ին կետում սահմանվում է «սահմանային պետական վերահսկողությունը պետական սահմանի անցման կետերում» հասկացությունը, որի բովանդակությունը ներկայացված է միևնույն միտքը արտահայտող եզրույթներով: Միաժամանակ,	Ընդունվել է մասամբ:

				Նախագծի 8-րդ հոդվածում «սահմանային վերահսկողություն» բառերը փոխարինվել են «սահմանային պետական վերահսկողություն» բառերով:	
4.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի «3.1-րդ» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «3.1-ին» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով դասական թվականների գրության ձեւը:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածում համապատասխան բառով է փոխարինվել:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվում է Օրենքի 6-րդ հոդվածում լրացնել նոր 5.1-ին կետ, որի համաձայն՝ «Պետական սահմանի անցման կետերում սույն հոդվածով նախատեսված պետական վերահսկողության գործառույթները իրականացնում են մաքսային մարմինները՝ որպես սահմանային պետական վերահսկողություն պետական սահմանի անցման կետերում:»: Օրենքի 6-րդ հոդվածը վերնագրված է «Լիազոր մարմնի կողմից իրականացվող սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության եւ բուսասանիտարիայի ոլորտներում պետական վերահսկողությունը»: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝	Ընդունվել է: Նախագծով «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 6-րդ հոդվածի վերնագիրը խմբագրվել է, մասնավորապես՝ «Լիազոր մարմնի» բառերից հետո լրացվել են «և պետական	Ընդունվել է:

			«Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը:», առաջարկում ենք «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 6-րդ հոդվածի վերնագիրը համապատասխանեցնել հոդվածի բովանդակությանը:	սահմանի անցման կետերում սահմանային պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի» բառերը:	
6.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է Օրենքի 6-րդ հոդվածի 6-9-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել, իսկ Նախագծի 9-րդ հոդվածով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել նաեւ Օրենքի չորս հավելվածները: Հարկ է նկատել, որ Օրենքի չորս հավելվածներով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների արդյունքում ընդունված դրույթներ, իսկ Օրենքի 6-րդ հոդվածի 6-9-րդ մասերով հղում է կատարվում նշյալ հավելվածներին: Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորմամբ ներկայացված չէ որեւէ հիմնավորում նշված փոփոխությունների կապակցությամբ: Հետեւաբար հասկանալի չէ դրանք ուժը կորցրած ճանաչելու նպատակը:	Ընդունվել է: «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի հիմնավորումը խմբագրվել է:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետի «5.1-րդ» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «5.1-ին» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով դասական թվականների գրության ձեւը:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածում համապատասխան բառով է փոխարինվել:	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության**	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ	Ընդունվել է: Նախագծի 3-րդ	Ընդունվել է:

		պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետի «1.1-րդ» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «1.1-ին» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով դասական թվականների գրության ձեւը:	հոդվածում համապատասխան բառով է փոխարինվել:	
9.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	Միաժամանակ նշենք նաեւ՝ Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի 19-րդ հոդվածում կատարվող լրացումների արդյունքում մաքսային մարմինները ձեռք են բերում Օրենքի 19-րդ հոդվածով սահմանված պետական վերահսկողության գործառույթները պետական սահմանի անցման կետերում իրականացնելու իրավասություն, ինչպես նաեւ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումների վերաբերյալ որոշումներ ընդունելու իրավասություն: Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումները կարող են կիրառվել սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցների հետ զուգահեռ»: Հարկ է նկատել, որ Նախագծով որեւէ լրացում կամ փոփոխություն չի կատարվում Օրենքի 20-րդ հոդվածում, որով սահմանվում են պետական վերահսկողության արդյունքում օրենսդրության պահանջների խախտման դեպքում պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ կարգավորումները: Վերոգրյալից բխում է, որ մաքսային մարմինները թեեւ իրավասություն ունեն 19-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների վերաբերյալ որոշում կայացնելու եւ պետական սահմանի անցման կետերում պետական վերահսկողություն իրականացնելու, այնուամենայնիվ պատասխանատվության միջոց կիրառելու իրավունք չունեն:	Ընդունվել է: Առաջարկը լրացուցիչ կքննարկվի Նախագծերի փաթեթի 1-2-րդ ընթերցման ընթացքում: Եթե ներկայումս պետական սահմանում վարույթներ իրականացվում են, կքննարկվի դրանք մաքսային մարմինների կողմից իրականացվելու նպատակահարմարությունը կամ կքննարկվի համապատասխան տեղեկատվությունը լիազոր մարմնին տրամադրելու մեխանիզմը, որ իրենք վարույթ իրականացնեն:	Ընդունվել է:

10.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի «2.1-րդ» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «2.1-ին» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով դասական թվականների գրության ձեւը:	Ընդունվել է: Նախագծի 7-րդ հոդվածում համապատասխան բառով է փոխարինվել:	Ընդունվել է:
11.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսվում է լրացում կատարել Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում, որի արդյունքում այն ունենում է հետեւյալ բովանդակությունը. «Պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք, իսկ պետական սահմանի անցման կետերում սույն օրենքով նախատեսված սահմանային վերահսկողություն իրականացնող մաքսային մարմինները, իրավունք ունեն (...)»: Վերոգրյալի կապակցությամբ նշենք հետեւյալը. Նախ՝ Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում հղում է կատարվում Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերությանը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը հիմք ընդունելով՝ առաջարկում ենք «պարբերությունում» բառը փոխարինել «մասում» բառով:	Ընդունվել է: Ընդունվել է: Նախագծի նշված դրույթը խմբագրվել է՝ «պարբերությունում» բառը փոխարինելով «մասում» բառով:	Ընդունվել է:
12.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ**	Միաժամանակ նշենք նաեւ, որ Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց իրավասությունները, 2-րդ մասով՝ պարտականությունները, իսկ 3-րդ մասով՝ նրանց անօրինական գործողությունների հետեւանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ	Ընդունվել է: Նախագծծ 8-րդ հոդվածով օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում «պաշտոնատար անձինք» բառերից	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված	կարգավորումները: Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված լրացումը միայն Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում կատարելու արդյունքում մաքսային մարմիններին վերապահվում են միայն նոր իրավասություններ: Մինչդեռ պետական վերահսկողություն իրականացնող այլ պաշտոնատար անձինք, նույն իրավասություններն ունենալով հանդերձ, ունեն նաեւ իրենց իրավասություններից բխող պարտականություններ: Կարծում ենք անհրաժեշտ է Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված լրացումը կատարել նաեւ Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում:	հետո լրացվել են «, իսկ պետական սահմանի անցման կետերում սույն օրենքով նախատեսված սահմանային վերահսկողություն իրականացնող մաքսային մարմինները» բառերը, իսկ 21-րդ հոդվածի 3-րդ մասում «Լիազոր մարմնի» բառը փոխարինվել է «Պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի» , իսկ «լիազոր մարմինը» բառը՝ «պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմինը» բառերով:	
13.	ՀՀ կառավարություն	**««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և**	Բացի այդ՝ Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով կատարվող լրացման արդյունքում, կարծում ենք, անհրաժեշտություն է առաջանում նաեւ փոփոխություն կատարել Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում: Այսպես՝ Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ա»	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածով Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «կնիքով» բառից	Ընդունվել է:

		լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված	ենթակետով Օրենքի 21-րդ հոդվածում պետական վերահսկողություն իրականցնելու իրավասություն է տրվում նաեւ մաքսային մարմիններին: Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ունի հետեւյալ բովանդակությունը. «(…) Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին հանձնվում է փաստաթղթի պատճենի՝ լիազոր մարմնի կնիքով հաստատված օրինակը:»: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բացի լիազոր մարմնից մաքսային մարմինը եւս օժտված է իրականացնելու Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավասությունը՝ կարծում ենք՝ նշված կետում անհրաժեշտ է նշել ոչ միայն լիազոր մարմնին, այլեւ մաքսային մարմնին: Նշենք նաեւ, որ թեեւ Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «կնիքով» բառից հետո լրացվում են «կամ էլեկտրոնային եղանակով» բառերը, այնուամենայնիվ նշված ձեւակերպումը հիմք չի տալիս ենթադրելու՝ լիազոր մարմնից բացի այլ մարմին նույնպես իրավասություն ունի կնիքելու փաստաթղթերի պատճենները:	հետո «կամ էլեկտրոնային եղանակով» բառերով լրացման փոխարեն կատարվել է հետևյալ փոփոխությունը՝ «լիազոր մարմնի կնիքով» բառերը փոխարինվել են «լիազոր մարմնի կամ մաքսային մարմնի կնիքով կամ էլեկտրոնային եղանակով» բառերով:	